ԿԱՅԱՆ ԲԵՐԴԻ ԵՎ ԳԱՎԱՌԻ ՏԵՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Ռ. Ի. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Բագրատունյաց շրջանում, պետականության վերականգնումից հետո, Հայաստանում հիմնվել են բազմաթիվ ռազմակայաններ, բերդեր և այլ ամրություններ, որոնք հսկում էին ստրատեգիական և առևտրական ճանապարհները, ապահովում երկրամասի պաշտպանությունը։ Առավել խոշորները դառնում էին իշխանական դղյակներ և հաճախ վերածվում բերդաքաղաքների։ Լոռվա թագավորությունը նույնպես ուներ իր պաշտպանական ամրությունները։ Միայն Դավիթ Անհողինը (996—1048) կառուցել էր տասներկու բերդ, այդ թվում Լոռին[1], ուր Շամշուլդեի կորստից հետո, 1065 թ. տեղափոխվեց Կյուրիկյանների մայրաքաղաքը։ Ժամանակի ընթացքում Լոռին դարձավ նաև Գուգարքի գլխավոր առևտրա-արհեստավորական կենտրոնը։

Մյուս կարևոր ստրատեգիական հենակետն էր Կայան ամրոցը, կառուցված է հավանաբար X դ. սկզբին։ Կյուրիկյանների օրոք՝ X—XI դդ. եղել է պահակային բերդ, որը պաշտպանել է թագավորության արևելյան սահմանները։ Այստեղ է ապաստանել շրջակայքի բնակչությունը վտանգի պահին։ Աստիճանաբար բերդի նշանակությունը մեծանում է և XII—XIII դդ. դառնում խոշոր ավատատիրական տների նստոցը, Մահկանաբերդի Արծրունիների և Զաքարյանների առանձին ճյուղերը Կայանում են հիմնում իրենց դղյակները։ Որպես խոշոր ռազմական շինություն, կապված Կյուրիկյան և Զաքարյան շրջանների հետ, բերդը մեծ հետաքրքրություն է ներկայացնում պատմաբանի ու հնագետի համար։

X—XIII դդ. մատենագիրների տեղեկություններից հնարավոր է որոշակիորեն պատկերացնել բերդի ու գավառի ճակատագիրը մինչև մոնղոլների տիրապետության շրջանը։ Հետագա դարերում բերդի վիճակը նյութի պակասության պատճառով մշուշապատ է։

Շատ սուղ են աղբյուրները բերդի տեղագրության վերաբերյալ։ Գիտնականները այդ հարցը արծարծել են գավառի տեղադրության հետ՝ կռվան ունենալով գլխավորապես Հովհաննես Դրասխանակերտցու ու Կիրակոս Գանձակեցու հաղորդումները։

Միջնադարյան հեղինակներից առաջինը Կայան բերդը հիշատակում է Հովհաննես Դրասխանակերտցին։ 922 թ. Աշոտ Երկաթի հետ թշնամացած Ուտիքի իշխան Սահակը մտել էր Բագրատունիներին պատկանող Զորոփոր գավառը և գրավել նրա ամրոցները, որոնցից պատմիչը հանվանե հիշատակում է միայն Կայանը։ Արքան ստիպված է եղել մի զորամասով անցնել Գուգարք... «հապճեպով գան հասանեն ի Զորոյփոր։ Եւ տեսանեն նախ զԿայանն

---

1 Հաւաքումն պատմութեան Վարդանայ վարդապետի, Վենետիկ, 1862, էջ 106 (այսուհետև Վարդան).

կոչեցեալ բերդ յափշտակեալ իշխանին Սահակայ»[2]։ Կիրակոս Գանձակեցու մոտ Կայան բերդը անբաժան է Աղստևի ավազանի Կայան գավառից[3]։ Այդ երկու փաստերի հիման վրա Հ. Հյուբշմանը Զորոփորը նույնացնում է Կայանի հետ և բերդը տեղադրում Աղստևի հովտում[4]։ Նույն հովտում են տեղադրում բերդը նաև Ղ. Ալիշանը, որը սակայն, Զորոփորը չի նույնացնում Կայանին և Լեոն[5]։

Սակայն ինչպես իրավացիորեն նկատել է Հ. Մանանդյանը, հարցը պահանջում է հատուկ քննություն[6]։

Նախկին Կյուրիկյան թագավորության սահմաններում Կայան բերդ հայտնի է Դեբեդ (հին Զորագետ) գետի ափին, Հաղբատի դիմաց։ Հուշարձանը գիտական շրջաններին ծանոթ է սակավաթիվ այցելուների նկարագրությունից, առաջին հերթին Սարգիս Ջալալյանցի, Հովհաննես Ղրիմեցու և Գրիգորիս Երզնկյանցի նոթերից[7]։ Ելնելով բերդի անունից՝ նրանք առանց տարակուսելու գրավոր աղբյուրների տեղեկությունները վերագրել են Հաղբատամերձ բերդին և այն նույնացրել միջնադարյան Կայանի հետ։ Դրանով իսկ առաջ են եկել տարակարծիքներ։

Այս առեղծվածի պատասխանը չի տրվել և հարցը մինչ այսօր մնում է չլուծված։ Նրա լուծմանը մեծապես կօգնեին սրեզումները, սակայն բերդը հնագիտական հետազոտության առարկա չի դարձել և մեզանում հիշվում է միայն ուղեցույցներում և Հաղբատին նվիրված ուսումնասիրություններում[8]։ Անհրաժեշտ է համակողմանի ուսումնասիրել նաև գրավոր աղբյուրները։ Առաջինը նման աշխատանք է ձեռնարկել Վենետիկի մխիթարյան Մ. Հովհաննիսյանը, որի մենագրության մեջ Կայան բերդին հատկացված է առանձին բաժին[9]։ Այս հետազոտությունը աչքի է ընկնում նյութի ընդգրկման լայնությամբ, հեղինակը քննում է միմյանց հետ կապված երեք՝ բերդի կառուցողի, կառուցման ժամանակի և տեղադրության հարցերը։ Հովհաննիսյանը ընդունում է այն տեսակետը, որ Հաղբատի մոտ կիսավեր վիճակում

---

2 Յովհաննու կաթողիկոսի Դրասխանակերտցւոյ, Պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1912, էջ 310։

3 Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, Երևան, 1961, էջ 209—210։

4 Հ. Հյուբշման, Հին Հայոց տեղոյ անունները, Վիեննա, 1907, էջ 235։

5 Ղ. Ալիշան, Տեղագիր Հայոց Մեծաց, Վենետիկ, 1853, էջ 83, Լեո, Հայոց պատմություն, հ. 2, Երևան, 1967, էջ 559։

6 Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. Բ, մ. Ա, Երևան, 1957, էջ 308։

7 Ս. Ջալալյանց, Ճանապարհորդութիւն ի Մեծն Հայաստան, մ. Ա, Տփղիս, 1842, էջ 81—82։ Описание монастырей Ахпатского и Сананнского архимандрита Иоанна Крымского, СПб, 1863, էջ 10—11։ Այս աշխատությունը հայերեն հրատարակվել է 1965 թ.՝ Յովհաննու Ղրիմեցւոյ Պատմութիւն հռչակավոր վանից Հաղբատայ Ս. Նշանին, հրատարակեց Համազասպ Ոսկյան, Վիեննա, 1965, էջ 55—56, 105, 142, Գ. Երզնկյանց, Կայան բերդ և Կայենոյ ձոր («Ազգագրական հանդէս», Գ, Թիֆլիս, 1898, էջ 316—328)։

8 Հ. Եղիազարյան, Ալավերդու շրջանի հուշարձանները (ուղեցույց), Երևան, 1952, էջ 26։ Նույնի՝ Հաղբատի վանքը և նրա հետ կապված Հաղբատ գյուղի հուշարձանները («Էջմիածին», 1961, հ. Դ, էջ 49—51), Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, Երևան, 1963, էջ 81—84, Թ. Ջուհարյան, Սովետական Հայաստանի պատմական հուշարձանները, Երևան, 1961, էջ 118։

9 Մ. Հովհաննիսյան, Հայաստանի բերդերը, Վենետիկ, 1970, էջ 533—548, նույնը առանձին հոդվածով՝ Կայենոյ կամ Կայեան բերդ («Բազմավէպ», 1963, № 4—8, էջ 111—121)։

պահպանված բերդը համապատասխանում է հին Կայանին։ Այս եզրակացությունը, սակայն, վիճելի է։

Որևէ հուշարձանի տեղադրության հաջող լուծումը սերտորեն կապված է կառուցողի և նրա ապրած ժամանակաշրջանի ճշտման հետ։ Այդ հարցում նույնպես կա որոշ խառնաշփոթություն։ Աղբյուրները Կայան բերդի կառուցումը վերագրում են երկու տարբեր անձնավորությունների՝ Հոլում Վասակին (մահ. 1021 թ.) և Հասան Կայենացուն (XII դ. երկրորդ կես), որոնցից ոչ մեկը չէր կարող կառուցել X դ. սկզբին արդեն գոյություն ունեցող բերդը։ Հաշվի առնելով, որ Դրասխանակերտցու ժամանակ Գուգարքը պատկանում էր Բագրատունիներին, կարելի է համաձայնվել Հովհաննիսյանի հետ[10] և հավանական կառուցող համարել Աշոտ Երկաթին, առավել ևս, որ վաղ միջնադարում բերդը աղբյուրներում չի հիշատակվում։

Այնուհանդերձ սրետք է պարզել նշված երկուսի առնչությունը Կայանի հետ։ Հոլում Վասակը (Պահլավունին) Գագիկ Ա-ին ժամանակակից Հայոց սպարապետն էր, որի մասին Մխիթար Այրիվանեցին գրում է. «Սա է (Գրիգոր Մագիստրոսը) որդին Հոլում Վասակայ շինողին Բջնոյ, Կայենոյ և Կայծոնոյ, զոր յանդէտս սպանին ի Սերկևիլէ»[11]։ 1045 թ. Գրիգոր Մագիստրոսը իր տիրույթների հետ միասին Կայանը հանձնեց Բյուզանդիային և հեռացավ Միջագետք[12]։ Պետք է ենթադրել, որ Կյուրիկյանների բերդին այդ ժամանակ տիրացել էին Պահլավունիները։ Միանգամայն հավանական է, որ կորուստը տեղի էր ունեցել 1001 թ., երբ Գագիկ Շահնշահը խռոված Դավիթ Անհողինից խլեց որոշ շրջաններ և միացրեց Բագրատունյաց թագավորությանը։ Դրանց թվում պետք է լինեին նաև Կայանն ու Կայծոնը, եթե հաշվի առնենք, որ 1020 թ. այդ բերդերը բաժին էին հասել Անիի թագը ժառանգած Հովհաննես Սմբատին. «... մեռաւ Գագիկ, տուեալ զթագաւորութիւնն երից որդւոց իւրոց...։ Զթագն տայ Յովանիսի, և զԱնի և զՇիրակ... զԿայեան և զԿայծոն և զՏաւուշ գաւառն Սեւորգեաց...»[13]։

Ըստ երևույթին, Կայանը և նրա շրջանը Կայծոնի հետ միասին Հովհաննես-Սմբատ տվել էր ի տնօրինություն Պահլավունիներին, որոնք պահեցին իրենց ձեռքում 25 տարի և, ի վերջո, հանձնեցին Բյուզանդիային։ Հասկանալի է, որ Վասակ սպարապետը ոչ թե կառուցել էր, այլ միայն նորոգել էր բերդը։ Մ. Հովհաննիսյանը իրավացի է, որ Այրիվանեցու «շինող» բառը տվյալ դեպքում նշանակում է «նորոգող»։ Սակայն հետագայում Կյուրիկյանները նա ստացան կորցրած հողերը։ Դրան նպաստեց կայսրության նոր քաղաքականությունը Հայաստանում։ Սելջուկների դեմ պատվար ունենալու անհրաժեշտությունը ստիպում էր նրան հովանավորել հայ ու վրաց գահակալներին։ Դավիթ Անհողինի որդին՝ Կյուրիկե Ա-ն (1048—1089) նույնիսկ դրամ կտրելու իրավունք ստացավ և պատված էր «կյուրապաղատ» տիտղոսով։ Նրան վերադարձվեցին նաև հոր տիրույթները։

Հասան Կայենեցու մասին կարելի է խոսել ավելի հանգամանորեն։ Բերդի կառուցումը Հասանին վերագրում է Վարդան պատմագիրը. «... զի յայնմ

---

10 Մ. Հովհաննիսյան, Հայաստանի բերդերը, էջ 540—541։

11 Մխիթարայ Այրիվանեցւոյ Պատմութիւն Հայոց, Մոսկվա, 1860, էջ 58—59։

12 Վարդան, էջ 99։

13 Վարդան, էջ 92։

ժամանակի նա (Իվանե Զաքարյանը) ունէր զԿայեան հայրենեօք ի Հասանայ Կայենեցւոյ շինողէ բերդին»[14]։

Մ. Հովհաննիսյանը շատ թերահավատ է նշված հաղորդման նկատմամբ։ Հասանին նա համարում է օտար իշխան (անշուշտ նրա ոչ հայկական անվան պատճառով), որը հայ հողի վրա չէր կարող բերդ կառուցել[15]։ Սակայն թերահավատության համար ոչ մի հիմք չկա. Հասանը օտար չէր, նա հայ ավատատեր էր և սերում էր Մահկանաբերդի Արծրունյաց տոհմից։ Նրա հայրը XII դ. հայտնի պետական գործիչ Ամիր-Քուրդ Արծրունին էր, որը վրաց արքունիքում վարում էր Քարթլիի և Թբիլիսիի Ամիրապետության պաշտոնը[16]։ Վրացիները Ամիր-Քրդին անվանում էին Աբուլ-Հասան[17], որը արաբերեն նշանակում է «Հասանի հայր»։ Քրդի անվան այս ձևը արդեն հուշում է, որ նա պետք է Հասան անունով որդի ունենար։ Եվ իրոք, 1957 թ. հայտնաբերվեց մի արձանագրություն, գրված Քրդի որդի Հասան Կայենեցու անունից։ «[Քր]դին իշխանաց իշխանին եւ մանդատուրտուխուցիսին որդոյ, Հասանա Կայենեցո շինեցի զհոգետունս ի մեջ լեռանց ի ոտս Փուսա հաստատ հայրենիցս մեր Կայենի և կանգնեցի զսբ խաչս վասն արեւշատութեան եւ վասն երկար կենդանութեան ինձ և զաւակաց իմոց, յիշեցեք»[18]։

Այս շինարարական արձանագրությունը վերաբերում է քարավանատան (=հոգետան) շինությանը, որը կառուցվել է Դվինից Տփղիս տանող առևտրական ճանապարհի վրա, անցնում էր Հրազդանի հովտով և իջնում դեպի Աղստև։ Շենքի ավերակները այժմ գտնվում են Դմաշեն գյուղից դեպի հյուսիս՝ 12 կմ հեռավորությամբ[19]։ Քարավանատան կառուցումը պատահական չէր. Մահկանաբերդի Արծրունիների տունը լայն կապերի մեջ էր Հայաստանի, Վրաստանի և հարևան երկրների՝ Կաբինի ամիրայության, Հյուսիսային Կովկասի առևտրական խավերի հետ։ Արծրունիները, Զաքարյանների տան մեծամեծների հետ գլխավորում էին հայ առևտրա-վաշխառուական դասը։

Մեր պատմագիրներից, բացի Վարդանից, Հասանին ճանաչում է նաև Ստեփանոս Օրբելյանը։ Վերջինը հետաքրքիր մանրամասն է հաղորդում Հասանի քաղաքական կենսագրությունից։ Հասանը մասնակցել է 1177 թ. վրաց Օրբելիների գլխավորած հակապետական խռովությանը և միացել սպասալար Իվանեն Օրբելուն. «...և ամենքեան համագունդ դիմեալ եկեալ էին առ նա (Իվանե Օրբելի) յԱգարակն դարապաս՝ Քարթլիս Հէրիսթաւքն... և Տաշրացիքն և Կայենեցին Հասան և Անեցին Գրիգոր Ապիրատեանց»[20]։

---

14 Նույն տեղում, էջ 140։

15 Մ. Հովհաննիսյան, էջ 538—539։

16 С. Еремян, Юрий Боголюбский в армянских и грузинских источниках (Երևանի պետհամալսարանի «Գիտական աշխատություններ», 1946, հ. 23, էջ 399, 404, 407)։

17 История и восхваление венценосцев, грузинский текст перевел К. Кекелидзе, Тбилиси, 1954, էջ 40։

18 Վ. Հարությունյան, Միջնադարյան Հայաստանի աշխարհիկ ճարտարապետությունը (ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1957, № 8, էջ 80)։

19 Վ. Հարությունյան, Միջնադարյան Հայաստանի քարավանատներն ու կամուրջները, Երևան, 1960, էջ 44—46։ Արձանագրությունը գրված է բազալտե քարից պատրաստած խաչի երեսին, որի լուսանկարը արվում է նույն գրքի 45 էջում։

20 Ստեփանոս Օրբելյան, Պատմութիւն նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, էջ 384։

Կայենեցի անունը վկայում է, որ Կայան բերդը եղել է Հասանի նստոցը։ Նրը են Արծրունիները տիրացել, չենք կարող ասել, բայց 1177 թ. արդեն նրանց ձեռքում էր։ Օրբելիների խռովությունը ճնշելուց հետո Քուրդը շնորհագուրկ եղավ և դրկվեց բոլոր պաշտոններից։ Դա պետք է իր պատճառները ունենար։ Առայժմ մանրամասները պարզ չեն, բայց նրա որդու հարելը խռովարարներին անհետևանք չէր կարող մնալ։ Քուրդ իշխանը գնաց Կարին, Սալդուխ ամիրայի մոտ, Սարգիս Զաքարյանի միջնորդությամբ Վրաստան վերադարձավ միայն 1185 թ. Թամար թագուհու ժամանակ և վերստին ստացավ իր տիրույթները ու պաշտոնները։ Նրա դարձի կապակցությամբ Կիրակոս Գանձակեցին գրում է. «Ապա դարձ եղև իշխանին Քրդին ի հայրենիսն իւր գալ յաշխարհն Կայենոյ և Մահկանաբերդոյ։ Եւ բազում մեծարանս եդ նմա թագուհին Վրաց, որ Թամարն կոչէր, դարձուցանելով ի նա զհայրենի տեղիսն և այլս յոլովս»[21]։ 1185 թ. Քուրդը ետ ստացավ հայրենի տիրույթները՝ Կայանն ու Մահկանաբերդը, որոնք թողել էր 1177 թ.։ Ուրեմն Կայան գավառին Արծրունիք տիրացել էին մինչև 1177 թ., ավելի որոշակի թվական առայժմ չենք կարող նշել։ Վարգանի հաղորդումը Հասանի կողմից Կայանը կառուցելու մասին վրիպակ չէ, բայց այս դեպքում «շինողն» նույնպես պետք է հասկանալ «նորոգողն» իմաստով։ Գավառն ու բերդը Արծրունիները պահեցին մինչև 1191 թ.։

Այն հեղինակները, որոնք Կայանը տեղադրում են Դեբեդի ափին, բերդի կառուցումը վերագրում են Հաղբատի առաջնորդ Հովհաննես եպիսկոպոսին, Զաքարյանների տոհմից։ Կիրակոս Գանձակեցին նրա մասին գրում է. «Սա շինեաց բերդ մի ամրագոյն պարսպօք մէջ ընդ Հաղբատ և ընդ Սանահինն»[22]։

Նույն Հովհաննեսը բերդի ներսում կառուցել է եկեղեցի և թողել հետևյալ արձանագրությունը. «Ի թուին Հայոց ՈՁԲ (1233) կամաւն Աստուծոյ, ես՝ տէր Յոհանէս, առաջնորդ Հաղբատա, քուերորդի մեծ պատրոնացն Զաքարէի եւ Իւանէի, ի ժամանակի, որ եհաս սասանումն աշխարհիս մերոյ անաւրէն խորազմենցն, ոչ գոյր տեղի ապաստանի սուրբ Նշանիս և եղբարցս։ Հրամանաւ քեռոյն իմո Իւանէի եւ որդոյն իւրոյ Աւագին, եւ Շահնշահի՝ որդոյն Զաքարէի շինեցի զամրոցս եւ զեկեղեցիս Հաղբատա սուրբ Նշանիս բաղում աշխատութեամբ։ Արդ, եթէ ոք զսա ի Հաղբատա հանէ, թէ ի մեծաց, թե ի փոքունց զինչ եւ իցէ պատճառաւ, մարդն այն նզովեալ եղիցի ի մահ եւ ի կեանս...»[23]։ Այս արձանագրությունը լրիվ համահնչուն է Գանձակեցու տեղեկության հետ և հստակ պատասխան է տալիս այն հարցին, թե ե՞րբ, ո՞ւմ կողմից և ի՞նչ նպատակով է կառուցված։ Կառուցվել է Հաղբատի առաջնորդ Հովհաննես եպիսկոպոսը 1233 թ. վանքի միաբանությանը Ջալալեդդինի արշավանքների տարիներին ապաստանելու համար։

Մ. Հովհաննիսյանը այլ կերպ է մեկնաբանում արձանագրությունը։ «Շինեցի» բառը այս դեպքում ևս նա հասկանում է «նորոգեցի» իմաստով։ Նրա կարծիքով՝ Հովհաննես եպիսկոպոսը միայն նորոգեց Աշոտ Երկաթի կառուցած բերդը[24], որը այժմ էլ կիսավեր կանգնած է Կիրակոսի նշած տեղում՝

21 Կիրակոս Գանձակեցի, էջ 209։

22 Կիրակոս Գանձակեցի, էջ 99։

23 Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 250—251։

24 Մ. Հովհաննիսյան, էջ 539—540, 544։ Հեղինակը բերդի նորոգումը սխալմամբ դնում է Ո (1151) թվին։ Սխալը գալիս է Ջալալյանցի թյուր ընթերցումից (ձանապարհորդու-

Հաղբատի և Սանահնի միջև և կոչվում է Կայան։ Այդ հաստատում են տեսնողները՝ Ջալալյանցն (XIX դ.) և Ջուհարյանը մեր օրերում։ Այսպիսով՝ Մ. Հովհաննիսյանը եզրակացնում է, որ միջնադարյան Կայան բերդը կառուցված է եղել Հաղբատի և Սանահնի միջև, Զորադետի ափին[25]։

Երկու հանգամանք թույլ չեն տալիս համաձայնվել առաջարկած մեկնաբանության հետ։ Առաջին. XIII դ. բերդը Կայան չի կոչվել և, փաստորեն, անանուն է եղել։ Կիրակոսը այն անվանում է «բերդ մի ամրագոյն պարսպօք մէջ ընդ Հաղբատ և ընդ Սանահինն», իսկ Հովհաննես եպիսկոպոսը՝ «Ամրոց Հաղբատայ սբ. Նշանի»։ Վերջինս նույնպես հատուկ անուն չէ և ցույց է տալիս միայն շինության բնույթը։ Ճիշտ է, այսօր այդ բերդը կոչվում է Կայան, սակայն գիտական գրականության մեջ իրավացիորեն նշվել է, որ այդ անունը նոր է[26], այդպես է կոչվել, անկասկած, ապաստանավայր լինելու պատճառով ավելի ուշ ժամանակներում, և հնարավոր չէ որոշել թե երբ։

XVII դ. վերջում Առաքել Դավրիժեցին բերդի եկեղեցին անվանում է «Տեսս և անց». «Թուին ՌՃԺԷ (1668)... եղև շարժս այս յԱրտաւել քաղաք, ի Թաւրէզ, յԵրևան, ի Տփղիս, ի Գանջայ, ի Շամախի, ի Դամուրշափուն, և յամենայն սահմանս իւրեանց, և յայսմ շարժմանէ Հաղպատայ վանից եկեղեցւոյ ներսի երեսէն որմոյ քարինքն թափեցան, և եկեղեցին որում անուն Տեսս և անց ասէին, որ ի մէջ Հաղպատայ և Սանահնոյ կայր շինեալ՝ բնաւին փլաւ...»[27]։ Թերևս այդ անունը բացատրվում է բերդի դժվար մատչելիությամբ։ Բոլոր հիմքերը ունենք եզրակացնելու, որ դարերի ընթացքում ծառայելով վանքի միաբանությանը որպես ապաստանավայր, այն ավանդական ձևով դիտվել է որպես «Կայան» և այդպես էլ կոչվել XVII դ. հետո։ XIX դ. նոր անունը արմատացած էր և դարձել էր հանրաճանաչ։ Սարդիս Ջալալյանցը, Հովհաննես Ղրիմեցին և մյուսները ակամա շփոթության մեջ ընկնելով, առանց կասկածանքի բերդը նույնացրել են Կյուրիկյանների Կայանի հետ, դրանով իսկ նոր սխալների դուռ բացել[28]։

Երկրորդ։ Հիշենք, որ «Ամրոց Հաղբատա սբ. Նշանին» կոչված բերդը կառուցվել է Սանահնի և Հաղբատի միջև, վերջինի միաբանությանը ապաստան տալու համար։ Եթե սա Կայանն է, ապա երկու վանքերն էլ Հովհաննես Դրատխանակերտցու ժամանակ (922 թ.) պետք է արդեն հիմնված լինեին, այլ կերպ ամրոցը չէր կառուցվի, այնինչ Սանահնի վանքը հիմնվել է 966—972 թթ. (նկատի ունենք վանքի գլխավոր՝ Ամենափրկիչ եկեղեցու կառուցումը, մյուս եկեղեցիները կառուցվել են ավելի ուշ), իսկ Հաղբատի վանքի գլխավոր եկեղեցին՝ Ս. Նշանը, որի համար կառուցվել է բերդ-ամրոցը՝ 976—

թին..., էջ 81), որից օգտվել է Մ. Հովհաննիսյանը։ Ճիշտ թվականն է ՈՁԲ (1233)։ Արձանագրության անձինք՝ Իվանե Զաքարյանի որդի Ավագը (մահ. 1250 թ.), Զաքարե ամիրասպասալարի որդի Շահնշահը (մահ. 1261 թ.), 1151 թ. չէին կարող հիշատակվել։ Այդ հանգամանքի վրա երկուսն էլ ուշադրություն չեն դարձրել։

25 Նույն տեղում, էջ 544—546։

26 Կ. Ղաֆադարյան, Հաղբատ, էջ 81, 251։

27 Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ, Վաղարշապատ, 1896, էջ 665։ Գ. Երզնկյանցն (էջ 319) և Ս. Էփրիկյանը՝ Պատկերազարդ բնաշխարհիկ բառարան, հ. 2, Վենետիկ, 1907, էջ 273, Դավրիժեցու հաղորդումը թյուրիմացաբար վերագրում են Զաքարիա սարկավագին։

28 Հ. Մանանդյան, էջ 308։

991 թթ.»[29], Ուրեմն Դրասխանակերտցու ժամանակ Զորագետի ափին բերդ չէր կառուցված, որովհետև վանքերը դեռ չէին հիմնվել։ Չխոսելով արդեն այն մասին, որ վանքի միաբանությունը պետք է բավականին մեծ թիվ կազմեր, որպեսզի նրա համար հատուկ ամրոց-ապաստան կառուցվեր, իսկ դա կատարվել է աստիճանաբար, XI—XII դդ.։

Նշված պատճառներով Հաղբատի «Ամրոց Ս. Նշանի» կառուցման ժամանակը հնարավոր չէ տեղափոխել X դ. 20-ական թվականները։ Դա Դրասխանակերտցու հիշատակած բերդը չէ, կառուցվել է 1233 թ. և հատուկ անուն չի ունեցել։

Կա մի երրորդ պարագա ևս, որը ժխտում է Մ. Հովհաննիսյանի և այլոց եզրահանգումը. Հաղբատի ամրոցի նույնացումը Կայան բերդի հետ ինքնին ենթադրում է հին Կայան գավառի տեղադրումը Դեբեդի հովտում։ Սակայն մատենագիրները այդ անունով կոչել են բացառապես Աղստևի ավազանը։ Այդ բանը հիշատ են հասկացել Ալիշանն ու Հյուբշմանը, բայց առաջինը բոլորովին չի նշել օգտագործած աղբյուրները, իսկ երկրորդը վկայակոչել է միայն Կիրակոս Գանձակեցուն։ Ըստ երևույթին այդ է պատճառը, որ գավառից անրաժանելի Կայան բերդը դուրս է բերվում Աղստևի ավազանից և տեղադրվում Դեբեդի ափին։ Նախ անհրաժեշտ է ի մի բերել աղբյուրների տվյալները Կայան գավառի մասին և պարզել նրան համապատասխանող ֆիզիկո-աշխարհագրական շրջանը, ապա փորձել նրա սահմաններում գտնել բերդը։

Դա հնարավոր է լուծել XII—XIII դդ. մատենագիրների օգնությամբ, որոնք գավառի մասին խոսելիս իրենց հաղորդումները զուգորդում են տեղադրական ծանոթություններով։ Օրինակ՝ Գանձակեցին Մխիթար Գոշի մասին գրում է. «Եւ բնակեցաւ նա ի վանքն, որ կոչիւր Գետիկ, ի գաւառին Կայենոյ, ի վերայ գետոյն մեծագունի, զոր անուանեն Աղստևոյ գետ, յաջմէ կողմանէ գետոյն»[30]։ Ստեփանոս Օրբելյանը նույնպես Աղստևի շրջանը ճանաչում է որպես Կայան։ XII դ. վերջից Կայանին տիրող Զաքարյաններն իրենց ենթակա գավառներում ժառանգական իրավունքով կառավարիչներ էին նշանակում և այդ եղանակով ստեղծում նոր ֆեոդալական տներ։ Այդպիսիներից էր նաև Սյունյաց Օրբելյանների տունը, որի հիմնադիրն էր Լիպարիտ Օրբելին։ Լիպարիտը Իվանե Զաքարյանից ստացավ Վայոց ձորը, Կոտայքը, Գեղարքունիքի մասը, Որոտան և Բարկուշատ բերդերը Սյունիքում, ապա՝ «Ի Կայեն զԱղստև իւր կերովն»[31]։

Աղստևի ավազանը երբեմն կրել է նաև այլ անուններ։ Օրինակ, X դ. հեղինակ Ստեփանոս Տարոնեցին գործածում է «գաւառ Աղստև» ձևը։ 1001 թ., երբ Կյուրիկյան Դավիթ Անհողինը ըմբոստացել էր Գագիկ Ա-ի դեմ և չէր ճանաչում նրա սյուզերենությունը, Հայոց արքան պատժիչ արշավանք էր կազմակերպել Գուգարք։ Դավթի երկրում շրջելուց և նրա բերդերը քանդելուց հետո Գագիկը «ընդ Գագ բերդ անցանելով եկ նա ի գաւառն Աղստև»[32]։

---

29 Հմմտ. Կ. Ղաֆադարյան, Սանահնի վանքը և նրա արձանագրությունները, Երևան, 1957, էջ 15, 26։ Նույնի՝ Հաղբատ, էջ 13—15։

30 Կիրակոս Գանձակեցի, էջ 209։

31 Ստեփանոս Օրբելյան, էջ 397։

32 Ստեփանոսի Տարոնեցւոյ Ասողկան Պատմութիւն տիեզերական, ՍՊԲ, 1885, էջ 280։

Գագը Աղստևի ավազանի մեծ բերդերից է, գտնվում է Նոյեմբերյանի շրջանի Կոթի գյուղից արևելք, շրջակայքը՝ Գագա դաշտը հարուստ է հուշարձաններով, որոնցից առավել նշանավորները հիշատակվում են XIII դ. աշխարհագիր Վարդան վարդապետի մոտ. «Վրկանի աշխարհն Գրիմն է, ձգի մինչև ի Կասբից ծովն եւ ապա դաշտն Գագայ, ուր կայ սուրբ Սարգիսն, եւ Մշկայ վանքն եւ Մակարայ վանքն, եւ բերդն Կայեն եւ Կայծոն»[33]։

Մեզ համար կարևորն այն փաստն է, որ Կայան բերդը գտնվում էր Գագա դաշտում կամ մոտ էր նրան, դրանով իսկ պարզվում է, թե Աղստևի ավազանի որ մասում պետք է կենտրոնացնել բերդի որոնումները։

XII—XIII դդ. շրջանը երբեմն անվանել են նաև գավառի մյուս խոշոր բերդի՝ Մահկանաբերդի անունով, որը Քուրդ Արծրունու նստոցն էր։ Մատենագրական սուղ տվյալներից կարելի է մոտավոր ճշտությամբ որոշել բերդի դիրքը։

1280 թ. Դեզձնուտի վանքում գրված հիշատակարանում վանքը համարվում է Մահկանաբերդի սահմաններում. «Ի յերկիրս Մահկանաբերդոյ ի վանսն Դեղձնուտ»[34]։ Վանքը գտնվում է Աղստևի հովտում, Իջևանի շրջանի Գետաշեն գյուղից 15 կմ հարավ-արևմուտք։ Դրանով իսկ որոշվում է Մահկանաբերդի դիրքը Աղստևի հովտում։ XII դ. հեղինակ Դավիթ Քոբայրեցին «Մահկանաբերդ գավառում» է տեղադրում Կայան բերդը։ 1177 թ. վրաց Օրբելիների խռովության ժամանակ սպասալար Իվանե Օրբելին փակվել էր Լոռվա բերդում, իսկ նրա եղբայր Լիպարիտը փորձել էր ամրանալ իրենց դաշնակից Հասան Արծրունու նստոց Կայանում։ Սակայն Լիպարիտը չհասավ տեղ, Գեորգի Գ-ի հրամանով Քուրդ իշխանը (որը հավատարիմ էր մնացել թագավորին) փակեց նրա ճանապարհը և ջարդեց զորամասը։ Այդ մանրամասնությունները հայտնի են Քոբայրեցու հիշատակարանից. «Լիպարիտ... առնու զորդի թագաւորին զԴեմետրէ և դիմէ յանմատոյցն Կայան, որոց զհետմտեալ հրամանաւ թագաւորին բարեպաշտ ամիրապետն Տփխեաց, Քուրդն անուանեալ, հասանէ ի կիրճս ճանապարհի նոցա, յիւր սեփականն գաւառն Մահկանաբերգն կոչեցեալ, հարկանէ դէմ յանդիման նոցա...»[35]։ Մահկանաբերդ գավառի բերդերը՝ Կայան և մյուսները կարող էին գտնվել միայն Աղստևի հովտում։ Դրանով իսկ որոշվում է Կայան գավառի տեղադրությունը նույն գետի ավազանում[36]։ Նման եզրակացությունը հաստատվում է Զաքարյանների տան կալվածքների ներքին վարչատերիտորիալ բաժանմամբ։ Նրանց երկու ճյուղերը տիրացել էին նախկինում Կյուրիկյաններին պատկանող մարզերին, Հաղրատն ու Սանահինը Զորագետի ամբողջ լեռնահովիտով գտնվում էին ավագ եղբոր Զաքարե ամիրսպասալարի իշխանության սահմաններում, իսկ Կայանն ու Կայծոնը (Կայան

---

33 «Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի», քննական հրատարակություն Հայկ Պերպերյանի, Փարիզ, 1960, էջ 34։ Նույն աղբյուրի համառոտ օրինակում Կայենի և Կայծոնի անունները ձուլված են միմյանց. «Կայէնկեծոյ բերդն մօտ է Գագայ դաշտեն» (էջ 17)։

34 Մաշտոցի անվ. Մատենադարանի ձեռագիր № 5254, էջ 54բ։

35 Վ. Հակոբյան, Դավիթ Քոբայրեցու հիշատակարանը (ԳԱ «Տեղեկագիր», 1952, № 8, էջ 119—120)։

36 Դրանով է բացատրվում, որ Աղստևի ավազանի հուշարձանները մատենագիրները գիտում են որպես Կայանի հուշարձաններ։ Դրանցից են Հաղարծինը, Գետիկը, Զաքարյանները պատվել էին Սյունյաց առաջնորդ Ստեփանոս եպիսկոպոսին. «Եռտուն ի Կայեն տեղի հանգստեան նմա զգերահռչակ ուխտն Հաղարծին և գիւղն զԱբասաձորն»։ Ստեփանոս Օրբելյան, էջ 342։ Կիրակոս Գանձակեցի, էջ 173, 203։

գավառը) պատկանում էր Իվանեին[37]։ Դա նշանակում է, որ Հաղբատն և ընդհանրապես Զորագետի հովիտը Կայան գավառից դուրս էին, Զորագետ—Դեբեդի ավազանը չէ, որ կոչվել է «գավառ» կամ «աշխարհ Կայենոյ»[38]։

Ուրեմն ոչ թե Դեբեդի, այլ Աղստևի հովտում կարող էր գտնվել Կայան բերդը։ Մ. Հովհաննիսյանը բերդի առկայությունը Դեբեդի ափին բացատրում է նրանով, որ Աղսաևը Գանձակեցու մոտ նույն Զորագետն է, նրա երկրորդ անունը։ Այս տեսակետը հիմնավորվում է երկու փաստարկներով։ Պատմիչը Աղստևը անվանելով մեծ (մեծագունի) նկատի ունի Զորագետը, որովհետև գավառի[39] միակ մեծ գետը Զորագետն է, մինչդեռ Աղստևը լոկ գետակ է և չէր կարող կոչվել մեծ։ Երկրորդ. Կայան բերդի մոտ էր գտնվում Վարդան Արևելցու ճգնարանն ու դպրոցը. «և ինքն եկեալ ի ձորն Կայանոյ ի միայնարանն իւր, զոր սուրբ Անդրէն կոչէին, հանդէպ անառիկ բերդին Կայանոյ...»[40]։ Ս. Անդրե միանարանը Ս. Ջալալյանցի վկայությամբ այսօր գտնվում է Դեբեդի ափին, Հաղբատի մոտ։ Այս հանգամանքը նույնպես հաստատում է, որ Կիրակոսի Աղստևը նույն Զորագետն է[41]։

Նման փաստարկումները շատ երերուն են։ Ջալալյանցը սխալ կերպով նույնացնելով Հաղբատի ամրոցը Կայան բերդին, Կ. Գանձակեցու հաղորդումից ենթադրել է, որ այստեղ պետք է ուսուցաներ Վարդան Արևելցին և մի տապանաքար վերագրել է պատմագրին։ Սակայն տապանաքարի վրա գրած է միայն «ՉԻԲ» (1273)[42] և հայտնի չէ, թե ում գերեզմանն է։ Դրան հակառակ ունենք գրավոր վկայություն, որ պատմագիրը թաղված է Խոր Վիրապում[43]։

Միանգամայն սխալ է երկու գետերի նույնացման վերագրումը Կիրակոսին. պատմիչը Աղստևը անվանելով մեծ կամ մեծագունի ոչ մի դեպքում չի հասկացել Զորագետը (Դեբեդը)։ Ճիշտ է, նա Զորագետը անունով չի հիշատակում, բայց հստակ պատկերացում ունի և խիստ զատում է Զորագետի ավազանը Աղստևի ավազանից։ Օրինակ, նա պատմում է, որ Զաքարե սպասալարը ցանկանում էր որոշ փոփոխություններ մտցնել հայ եկեղեցու ծիսակատարության մեջ, որին դիմադրում էր հոգևորականությունը։ Մասնավորապես Հաղբատի առաջնորդ Գրիգոր եպիսկոպոսի կարգադրությամբ քարկոծվում է Զաքարեի նվիրակ Մինասը, բայց այնուհետև պատժից խուսափելու համար Գրիգորը ստիպված փախչում է Գոշի մոտ. «Եւ նա փախստական գնաց յաշխարհն Կայենոյ, ի վանքն Գետիկ, առ մեծ վարդապետն Մխիթար...»[44]։

---

37 Լ. Մելիքսեթ-բեկ, Վրաց աղբյուրները Հայաստանի և հայերի մասին, հ. Բ, Երևան, 1936, էջ 13—14։

38 Հմմտ. Ս. Երեմյան, Հայաստանը X դ. վերջին և XI դ. սկզբին, քարտեզ «Հայկական ՍՍՀ Ատլասում», Երևան, 1961, էջ 105։

39 Գավառի սահմանները Մ. Հովհաննիսյանը որոշում է Զորագետից մինչև «այսօր Աղստև կոչված գետը» և այդ ամբողջ շրջանը անվանում է Զորոփոր (էջ 542)։ Զորոփոր գավառի տեղադրության շուրջ գոյություն ունեն տարակարծիքներ։ Հովհ. Դրասխանակերտցու խոսքերից դատելով՝ Զորոփորը պետք է զբաղեցներ Աղստևի միջին հոսանքի լեռնահովիտը, բայց մասնագետներից շատերը (Ղ. Ալիշան, Ս. Երեմյան և այլք) գավառը տեղադրում են Զորագետի հովտում։ Հարցը կարոտ է հատուկ քննության։

40 Կիրակոս Գանձակեցի, էջ 311։

41 Մ. Հովհաննիսյան, էջ 542—544։

42 Ս. Ջալալյանց, էջ 82։

43 Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի, էջ 29։

44 Կիրակոս Գանձակեցի, էջ 173։

Ինչպես տեսնում ենք, Կիրակոսի համար Զորագետը (Հաղբատը) բոլորովին տարբեր է Աղստևից (Գետիկից)։ Այն, ինչ Հովհաննիսյանի ենթադրությամբ մեկ գավառ էր Զորոփոր անունով, իրականում երկու տարբեր գավառներ էին՝ Տաշիր ու Կայան, յուրաքանչյուրը իր գլխավոր գետով։

Այսպիսով, աղբյուրների ներկա քննությունից պարզվեց, որ միջնադարյան Կայան բերդը գտնվում էր Աղստևի ավազանի սահմաններում։ Բերդին հարևանցող հուշարձաններից մեզ հայտնի են Մշկավանքն ու Մակարավանքն, որին շատ մոտ է Դեղձնուտի վանքը։ Դրանք գտնվում են Աղստև գետի միջին հոսանքում, որը ներկա վարչական բաժանումով համապատասխանում է Իջևանի շրջանին։ Իջևանի շրջանի բերդերն են՝ Աղշկա բերդը (Ղըզղալա), Մանթաշը, Բերդաքարը (Մահկանաբերդը) և մի քանի այլ փոքրիկ բերդաշինություններ։

Մեր համոզմամբ Կայանին համապատասխանում է Աղշկա բերդը։ Դրա համար կան բոլոր նախադրյալները՝ բերդը կառուցված է դժվար մատչելի բարձր լեռան վրա և միջնադարում, իրոք, կարող էր լինել անառիկ, հարմարեցված է մեծ թվով մարդկանց տեղավորելու համար, ունի լավ պահպանված ամուր և ամբողջական պարիսպներ։ Ներսում կան՝ մեծ ջրավազան, պահեստասենյակներ, պահպանվել են բնակատեղերի հետքեր և կիստվեր եկեղեցի։ Բերդը գտնվում է Աղստևի ձախ ափին, Իջևան քաղաքից 15 կմ արևմուտք, Գագ բերդից մոտ 40 կմ հեռավորությամբ։ Մանթաշը չէր կարող լինել Կայան, որովհետև այն փոքր է, չունի ապրելու համար անհրաժեշտ կառույցներ։

XIV դ. հետո, օտար տիրապետության պայմաններում, երբ ասպարեզից հեռացել էին տեղի հայ ֆեոդալները, բերդը լքվեց, իսկ Կայան բառը կորցրեց իր իմաստը և աստիճանաբար մոռացվեց։ Ժամանակի ընթացքում երևան եկան նոր տեղանուններ։ Գավառը XVII դ. սկզբին կոչվել է «Ղրաղի ձոր», բերդի նոր՝ «Աղշկա բերդ» անունը կապված է ժողովրդական ավանդության հետ[45]։

МЕСТОРАСПОЛОЖЕНИЕ КРЕПОСТИ И ПРОВИНЦИИ КАЯН

Р. И. МАТЕВОСЯН

Резюме

Одной из известных крепостей Гугарка в эпоху Кюрикидов (X—XI вв.) и Закарянов (XII—XIII вв.) был замок Каян. Однако его местоположение до сих пор точно не установлено. Мхитарист М. Ованисян в работе «Крепости Армении» (Венеция, 1970), отождествляет Каян с одноименной крепостью на р. Дебед, около Ахпата.

Сопоставление источников X—XIII вв. приводит к выводу, что крепость находилась в долине р. Агстев и соответствует нынешней «Девичьей крепости» *(Աղշկա բերդ)* Иджеванского района. По имени крепости называлась и провинция.

---

45 *Հմմտ. Զաքարիա սարկավագի մոտ. «գաւառին Կայենաձորոյ՝ որ է Ղրաղի ձոր»՝ Զաքարեայ սարկաւագի Պատմագրութիւն, Վաղարշապատ, 1870, էջ 24, 26։ Ավանդությանը կարելի է ծանոթանալ գրականությունից, Մ. Բարխուդարյան, Արցախ, Բաքու, 1895, էջ 393—394։*